ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 16 մայիսի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի ապրիլի 9-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի մարտի 30-ի N 404-Ա որոշմամբ հավանություն է տվել 2019 թվականի ապրիլի 9-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի ապրիլի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի ապրիլի 9-ին Երևանում՝ ռազմատեխնիկական ոլորտում Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության (այսուհետ՝ Կողմեր) միջև համագործակցությունը զարգացնելու նպատակով:

2. Համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ Կողմերը, իրենց պետությունների օրենսդրությանը և միջազգային իրավունքին համապատասխան, իրականացնելու են համագործակցություն ռազմատեխնիկական բնագավառում և, հատկապես, գործունեություն՝ կապված ռազմական նշանակության արտադրանքի արտահանման ու ներմուծման, այդ թվում մատակարարման և ձեռքբերման, ինչպես նաև մշակման ու արտադրության հետ (սպառազինություն, ռազմական տեխնիկա, փաստաթղթեր, նյութեր, ապրանքներ, ծառայություններ, մտավոր սեփականություն և ռազմատեխնիկական բնագավառում տեղեկատվություն՝ ներառյալ հետազոտությունների գիտատեխնիկական տվյալները և արդյունքները, ինչպես նաև, Կողմերի պետությունների

օրենսդրության համաձայն, ռազմական նշանակության արտադրանքի շարքին դասվող ցանկացած այլ արտադրանք):

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

3.1. աջակցություն ցուցաբերել ռազմատեխնիկական բնագավառում հայկական և չեխական կազմակերպությունների հետ համագործակցությանը՝ հետևյալ ուղղություններով՝

1) ռազմական նշանակության արտադրանքի մատակարարում, շահագործում, նորոգում, արդիականացում և տեխնիկական սպասարկում,

2) ռազմական նշանակության արտադրատեսակների լիցենզավորված արտադրության կազմակերպում,

3) ռազմական նշանակության արտադրանքի հետազոտում և մշակում,

4) մյուս Կողմին մատակարարելու համար նախատեսված ռազմական նշանակության արտադրանքի որակի նկատմամբ հսկողության ապահովում,

5) ուսումնական հաստատություններում մասնագետների և տեխնիկական անձնակազմի պատրաստում՝ հաշվի առնելով Կողմերի պահանջարկներն ու հնարավորությունները,

6) ռազմատեխնիկական համագործակցության այլ ուղղություններ, որոնց առնչությամբ Կողմերը հետաքրքրություն են դրսևորում (հոդված 1, մաս 2),

3.2. աջակցել ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում հայկական և չեխական այն կազմակերպությունների միջև գործարքների կնքմանը, որոնց, Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան, ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու իրավունք է վերապահված (հոդված 2),

3.3. ապահովել Համաձայնագրի իրագործման ընթացքում ստացված տեղեկատվության պաշտպանությունը (հոդված 5, մաս 1),

3.4. չօգտագործել Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ստացված տեղեկատվությունն ի վնաս Կողմերի շահերի (հոդված 5, մաս 2),

3.5. չվաճառել կամ չփոխանցել Համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքն առանց մատակարարող Կողմի նախնական գրավոր համաձայնության երրորդ կողմի, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (հոդված 6):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի ապրիլի 9-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 մայիսի 2023 թվականի
ՍԴՈ-1688